ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«19» 08 2022թ.
No 03/3-3/59395-2022

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ՆՈՒՆԵ ՖԱՐՄԱՆՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԹԱՄԱՋՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.07.2022թ. գրության

Հարգելի տիկին Ֆարմանյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ-ից դուրս ստացված կամ ստացման ենթակա՝ շահութահարկի և եկամտային հարկի հարկման օբյեկտները ներառվում են այդ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ համապատասխան հարկատեսակով հարկման օբյեկտի մեջ և ենթակա են հարկման ՀՀ-ում օրենսգրքով սահմանված կարգով, եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների և ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկման նպատակով նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որոշվող հարկման օբյեկտների գծով հաշվարկված հարկերի գումարները նվազեցվում են համապատասխան հարկերի այն գումարների չափերով, որոնք այդ կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից գանձվել են օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հարկերի գումարները նվազեցվում են օտարերկրյա պետություններում ձևավորվող հարկման օբյեկտներից օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափով հաշվարկվող համապատասխան հարկերի գումարները չգերազանցող չափերով,

- 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան՝ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք հարկային տարում ՀՀ-ում փաստացի գտնվել են 183 և ավելի օր: Ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում նաև այն ֆիզիկական անձինք, որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում: Նույն կետի կիրառության իմաստով՝ կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացած են ֆիզիկական անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե ՀՀ-ում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը,

- 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք,

- 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների,

- 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամտային հարկով հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամտի մեջ ներառվում են ինչպես ՀՀ աղբյուրներից, այնպես էլ ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտները, բացառությամբ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի ձեռնարկատիրական եկամուտների:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

8/19/2022

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.՝ ՎՄԸՎ հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. 060-844-779